ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 10-Ա 12 հունվարի 2026 թ.

ՀԱՍՄԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ Հ.1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-րդ, 37.2-րդ, 39-րդ կետերի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 513 արձանագրությունը (2026 թվականի հունվարի 8-ի Ն/08-2026), ինչպես նաև Հասմիկ Բաղդասարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հասմիկ Բաղդասարյանին 2026 թվականի հունվարի 13-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշենի Հ. 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով (13.01.2026-13.01.2031թթ.):

2. Փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան Հ. 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խանում Ղազարյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Խանում Ղազարյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

12.0

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 371084

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ